№ 110 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 **1891** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1 № 110

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քանդել ենք, թէ ստեղծել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Вѣстникъ Винодѣлія» ամսագիրը. Նամակ Ալէքսանդրապօլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսէլ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էվէլինա.

ՔԱՆԴԵԼ ԵՆՔ ԹԷ ՍՏԵՂԾԵԼ

Նորերումս մենք սկսեցինք խիստ կերպով քննադատել հայոց թատրոնը. անմիջապէս ամեն կողմից լսվեցան աղաղակներ թէ «Մշակը» կամենում է քանդել նորածին հայոց թատրոնը:

Այդ աղաղակը կարճատեսների և խաւարամիտների կողմից այն աստիճան սովորական է, որ իսկապէս չարժէր էլ ուշադրութիւն դարձնել այդ հին երգի վրա....

Այ՛օ, դա հին, շատ հին երգ է:

Ամեն անգամ, որ մենք քսան տարվայ ընթացքում հայերի մի որ և է պակասութիւն էինք քննադատում, ամեն անգամ որ մենք հայոց այս կամ այն հաստատութեան պակասութիւններն ու կատարված զեղծումները խիստ քննադատութեան տակ էինք դնում,—խաւարամիտները մեզ պատասխանում էին թէ մենք քանդում ենք այս կամ այն հաստատութիւն:

Բանն այնտեղ հասաւ որ մի օր, մի քանի տարի առաջ, մեր օրգաններից մին, «Արձագանք» շաբաթաթերթը, ուղղակի սկսեց մեղադրել մեզ թէ մենք քննադատելով հայերին, մտրակելով հայերի պակասութիւնները՝ օտարների առջև կոտրում ենք հայոց անունը: Ի՞նչ կը լինէր, աւելացնում էր շաբաթաթերթը, եթէ «Մշակի» յօդուածները թարգմանվէին մի որ և է օտար լեզուով, ի՞նչ անճոռնի դաղափար կը ստանային օտարները հայերի մասին....

Այդ յօդուածին մենք այն ժամանակ պատասխանեցինք, որ ընդհակառակը, օտարները ծանօթանալով «Մշակի» մտրակող, մերկացնող, ինքնաքննող ուղղութեան հետ, աւելի էլ մեծ յարգանքով կը վերաբերվեն դէպի մի ազգ, որը երկիւղ չէ կրում խիստ ինքնաքննութիւնից: Եւ մեր խօսքերն արդարացան. անցեալ տարի, երբ Թիֆլիսի հայերը տօնում էին «Մշակի» խմբագրի գրական գործունէութեան քսան և հինգ ամեակը, թէ Թիֆլիսի, թէ Բաքուի, թէ Ստավրոպոլի, թէ Ղրիմի և թէ վերջապէս մասամբ Պետերբուրգի ռուսաց մամուլը միաբերան այն միտքը յայտնեց, որ մեծ պատիւ է բերում հայերին, որ նրանք տօնում են այնպիսի մի գրողի գործունէութիւնը, որն իր ամբողջ կեանքում ոչ թէ շոյում, շողոքորթում էր հայերին ու նրանց պակասութիւնները ծածկում, այլ մի գրողի, որն իր գործունէութեան ամբողջ ընթացքում անխնայ կերպով քննադատում էր հայերին, մտրակում էր նրանց պակասութիւնները.... Եւ ռուս մամուլը միաբերան աւելացնում էր. «Այդ երևոյթը պատիւ է բերում հայերին, մեծ յարգանք է ներշնչում դէպի այդ ազգը ապացուցանելով մեզ, որ այդ ազգը հասունացել է որպէս հասարակական օրգանիզմ:» Իսկ Ստավրոպոլի ռուսաց լրագիրն աւելացնում էր մինչև անգամ և հետևեալ խօսքերը. «Այ՛օ, այդ բանում, մեզ ռուսներին, մնում է միայն օրինակ առնել հայերից:»

Ապա, ո՞ւր մնացին «Արձագանքի» պէս խաւարամիտ օրգանի փայլուն դատողութիւնները....

Այ՛օ, մի ազգ, որն ինքն իրան քննադատել գիտէ, որը հանգիստ ոգով և մի տեսակ երախտագէտ զգացմունքով ընդունում է գրողի մտրակող դրչի արգասիքները, լաւ հասկանալով, որ գրողի այդ բռնած ուղղութիւնը ծագում է ոչ թէ թշնամութիւնից դէպի ազգը, այլ դէպի նա ունեցած սիրոյ խորին զգացմունքից,—այդ տեսակ ազգ համ ինքն իր աչքում, համ էլ օտարների աչքում՝ ամեն տեսակ յարգանքի արժանի է դառնում.... Այ՛օ, խիստ անողորմ անխնայ քննադատել՝ չէ նշանակում քանդել, այլ ընդհակառակն ստեղծել:

Միայն այն ազգերը երբէք չեն ուղղվում և ինչքան էլ ընդունակ և հանճարեղ լինէին, միշտ ատելի են մնում օտարներին, նրանցից ոչինչ յարգանք չեն վայելում, որոնք մի տեսակ վախ ունեն ինքնաքննող, մտրակող գրական փրկարար ուղղութիւնից: Այդ տեսակ ազգերից կամ ցեղերից են՝ հրէաները և մահմետականները:

Հրէական ընդունակ, հանճարեղ, նոյն իսկ շատ բաներում վերին աստիճանի համակրելի ցեղը, այն խոշոր պակասութիւնն ունի, որ դարերի ընթացքում կրօնապէս խիստ շովինիստ մնալով, երբէք չէր ընդունում նոյն իսկ իր միջից յայտնվող վերանորոգիչներից իր պակասութիւնների ոչ թէ միայն խիստ մտրակող քննադատութիւն, բայց ամենաթեթև յանդիմանութիւնն անգամ իր հնացած բարք ու վարքերի, իր խոշոր պակասութիւնների, իր փտած և անշարժ ուղղութեան վերաբերմամբ: Դարերից ի վեր հրէական ազգը միշտ հալածելիս է եղել իր բոլոր մարգարէներին, խաչ հանելիս է եղել իր բոլոր վերանորոգիչներին և մինչև հիմա էլ, եթէ մի հրէայ համարձակվի ճշմարտութիւնն ասել իր ցեղակիցների երեսին,—հրէաները նրան անմիջապէս կարտաքսեն իրանց միջից: Հրէաների պակասութիւնները քննադատող հրէան՝ անմիջապէս ստիպված է այսպէս թէ այնպէս դուրս գալ հրէութիւնից, որովհետև այն րոպէից երբ նա ձեռնամուխ կը լինի իր ցեղակիցների պակասութիւնների խիստ քննադատելուն,—նրա դրութիւնը հրէականութեան մէջ այլ ևս անտանելի կը դառնայ: Խօսեցէք մի որ և է հրէայի հետ, լինի դա հարուստ և ինտելիգէնտ մարդ, լինի դա արհեստաւոր, բանւոր,—և միշտ կը լսէք հրէայի բերանից ինքնահաւան գովասանք այն ամեն բանի, ինչ որ հրէական է.... Հրէականութիւնը, նրա ընտանեկան, հասարակական, համայնական կազմակերպութիւնը, հրէական կրօնը, նրա եկեղեցին, հրէայի բարք ու վարքը, նրա եկեղեցական, կրօնական կանոնները, ամուսնական օրէնքները, հրէայի բնաւորութիւնը, նրա կեանքի եղանակը, նրա յարաբերութեան ձևը դէպի հարևան օտարազգի ցեղերը,—մի խօսքով ամեն ինչ որ հրէական է, հրէայի կարծիքով՝ լաւ է, կատարեալ է, անսխալական է և կարիք չունի որ և է վերանորոգութեան.... Հրէան չէ տանում ինքնաքննութիւն. նա ամենամոլեռանդ ֆանատիկոս է իր դարևոր կեանքի, իր ամեն հաստատութիւնների վերաբերմամբ, նա կատարելատիպ է ազգային և կրօնական շովինիստ:

Այդ է պատճառը, որ հրէան անշարժ է, այդ է պատճառը որ նա միշտ, դարերից ի վեր պահպանում է իր բոլոր եղած պակասութիւնները, և ատելի է դառնում իր բոլոր շրջապատող ազգերի համար: Այդ է պատճառը, որ հարևան ազգերը, տեսնելով թէ այդ թէև ընդունակ, տաղանդաւոր, նոյն իսկ հանճարեղ տարրը ինքն իրան երբէք չը քննադատելով, մնում է նոյն անշարժ դրութեան մէջ, պահպանելով իր բոլոր դարևոր պակասութիւնները՝ իրանք, այդ օտար, հարևան ազգերն են սկսում անողորմ կերպով քննադատել հրէաներին....

Մի ազգ, որը չը գիտէ ինքն իրան քննադատել, ստիպված է լինում համբերութեամբ տանել իր դէմ ուղղած ուրիշների անողորմ քննադատութիւնները: Զանազանութիւնն այն է միայն, որ երբ մի ազգ շովինիստական, հրէշաւոր ինքնահաւանութեան զգացմունքով խմորված դարերի ընթացքում չիմացաւ ինքն իրան, թէև խիստ բայց սիրով քննադատել,—նա այնուհետև ստիպված է տանել օտարների իր դէմ ուղղված գուցէ մասամբ և ատելութեան զգացմունքից բղխած անողորմ քննադատութիւնը:

Իսկ այն ազգը, որն այնքան հասունացած է, որ համբերութեամբ տանում է իր միջից, իր շրջանից ծնված քննադատական ուղղութիւնը, իր պակասութիւնները անընդհատաբար մտրակող, ինքնաքննող ուղղութիւնը,—այդ տեսակ ազգ համ աւելի ընդունակ կը լինի առաջադիմելու, համ ինքն իրան կը յարգէ, համ էլ կը պարտաւորեցնէ օտարներին իրան յարգելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ» ԱՄՍԱԳԻՐԸ

Վաղուց արդէն ռուս գիտնական շրջաններում հարց էր դարթել գինեգործութեան մի մասնագիտական պարբերական հրատարակութեան կարեւորութեան մասին: Թէպէտ գիւղատնտեսութեան վերաբերեալ հրատարակվող օրագրերի մէջ նուիրվում են առանձին բաժիններ գինեգործութեան զանազան ճիւղերին, սակայն այդ միջոցով չէ կարող անմիջապէս լրանալ օրըստօրէ զարգացող բաղմատեսակ պահանջը, ուստի և կարդացող հասարակութեան մի առանձին դասակարդ տա-

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՎԷԼԻՆԱ

Մի քանի շաբաթվայ ծանօթութիւնը մտերմական, ընկերական յարաբերութիւններ հաստատեց իմ և Էվէլինայի մէջ: Ես զգում էի թէ սիրում եմ նրան,—բայց մեծ խնամքով աշխատում էի ծածկել նրանից իմ այդ զգացմունքը: Ես գուշակում էի թէ նա էլ սիրում է ինձ, թէև երբէք ամենաթեթև խոստովանութիւն, ամենաանշան ակնարկութիւն անդամ այդ տեսակ զգացմունքի մասին չէին արտասանել նրա շրթունքները....

Այդ ժամանակամիջոցում իմ սովորական պարապմունքներից ազատ ժամերում ես պարապում էի Պրուդօնի բաղմահատոր հեղինակութիւնների ուսումնասիրութեամբ: Մի քանի օր ես չէի տեսել Էվէլինային և համալսարանական առաւօտեան զբաղմունքներից յետոյ, ես իմ երեկոներն անց էի կացնում Պրուդօնի գրուածները մի տեսակ ագահութեամբ կարդալում: Ես հասել էի այն ընդարձակ գլխին, որի մէջ Ֆրանսիացի հեղինակը բացատրում է Աստուծու գաղափարի մասին իր թէորիան: Ես կարդում էի այդ գլուխը և զարմացած էի մնում, որ ոչինչ չէի հասկանում, չէի ըմբռնում հեղինակի միտքը.... Կարդում էի նոյն գլուխը սկզբից մինչև վերջը հինգ անգամ, տասն անգամ,—և դարձեալ ուղեղս հրաժարվում էր հեղինակի միտքը ըմբռնելուց....

Ես ծալեցի գիրքը, դժգոհ ինձանից, արհամարհելով ինձ մինչև անդամ, և դէպի իմ անձն ու իմ մտաւոր կարողութիւններն ունեցած այդ արհամարհական զգացմունքի տակ ճնշված՝ ես հագնվեցայ և գնացի օրիորդի մօտ, որին մի քանի օր է չէի տեսել:

Նրա մօտ մտնելուն պէս, նկատեցի նրա դէմքի արտայայտութիւնից թէ առանձին ուրախութիւն եմ պատճառել նրան իմ երևալով:

—Այդպէս են մոռանում, միթէ, բարեկամներին, ասեց նա ուրախ ժպտալով և ձեռքս պինդ սեղմելով....

—Հաւատացնում եմ ձեզ, օրիորդ, որ սաստիկ էի զբաղված այս օրերս....

—Զբաղված, կամ մի որ և է բանով վշտացած, աւելացրեց նա ուշադրութեամբ դիտելով դէմքս.

—Այո՛, և վշտացած.... Ես ինձանից շատ դժգոհ եմ, օրիորդ. ես մի նշանաւոր ժամանակից հեղինակի, Պրուդօնի գրուածքն եմ կարդում և չեմ հասկանում կարդացածը: Ես սկսում եմ շատ աննպաստ կարծիք ստանալ իմ մտաւոր կարողութիւնների մասին, ես սկսում եմ արհամարհել ինձ....

—Allons donc, ինչ երեխայութիւն է դա ձեր կողմից.... Այսօր չէք հասկացել,—վաղը կը հասկանաք.... Իսկ ես, սիրելի բարեկամ, ընդհակառակն շատ և շատ գոհ եմ ինձանից. ես այդ բոլոր օրերը, երբ դուք չը բարեհաճեցաք բաղդաւորացնել ինձ ձեր այցելութեամբ, աւելացրեց նա հեղնական ձայնով, հիմնաւորապէս և անդիր ուսումնասիրեցի Լիստի փոխադրած Վագնէրի «Լոէնգրին» օպերայից «Marche nuptiale» հրաշալի կտորը.... Դուք սիրում էք երաժշտութիւն, այնպէս չէ՞....

—Պաշտում եմ, օրիորդ.

—Ուրեմն նստեցէք այստեղ, դիւանի վրա, որպէս զի կարողանաք ինձ վրա նայել. միայն հանգիստ նստեցէք, ձայն մի հանէք.... Բայց ծխել կարող էք, ինչքան ուզենաք.

Եւ նա սկսեց ածել: Ես նայեցի նրա դէմքի վրա. նրա գեղեցիկ դէմքը մի վայրկեանում կերպարանափոխվեց. այդ ուրախ, զուարթ օրիորդական դէմքը միանգամից, առաջին վերցրած ակորդից արդէն, ստացաւ լուրջ, սառն, խոր մտածմունքների և ծանր հոգսերի մէջ խորասուզված կրնոջ պատկերը: Ես աւելի կասեմ. դա կնոջ դէմք չէր, այլ մի գեղեցիկ, մարմարեայ արձան, որին ճարտար քանդակագործը տուել էր խորին մտածմունքների մէջ խորասուզված մի գեղեցիկ կնոջ արտայայտութիւն.... Նա ածելու ժամանակ, կարծես մտնում էր մի սուրբ տաճար և իր ամբողջ էութեամբ ներշնչվում էր այդ սրբութեան զգացմունքով.... Նա ածելու ժամանակ՝ սրբագործում էր: Շատ և շատ տարիներից յետոյ ես ճանաչում էի մի բժիշկ, որը դէմքով շատ տգեղ էր,—բայց երբ այդ մարդը մօտենում էր հիւանդի անկողնուն, նրա դէմքը կերպարանափոխվում էր, կարծես լուսաւորվում էր մի արտասովոր լուսով. և այդ տգեղ դէմքը կատարելապէս գեղեցիկ էր դառնում.... Նա էլ այդ րոպէին ներշնչվում էր իր բարձր կոչման սրբութեամբ և այդ զգացմունքն էր, որը դիւթական կերպով կարողանում էր նոյն իսկ տգեղ դէմքը կատարելապէս գեղեցկացնել:

Էվէլինա ածում էր այդ երեկոյ արտասովոր արտայայտութեամբ, մի և նոյն ժամանակ և հրակայի ուժով.... Ես լսում էի և նայում էի,—և թէ նրա գեղեցիկ դէմքից, թէ նրա ածելուց կատարելապէս զմայլված, ժամանակ առ ժամանակ զգում էի թէ ինչպէս իմ ամբողջ մարմնովս անցնում էր մի տարօրինակ սարսուռ, երկիւղ, ահ ու դող.... Ես այնուհետև իմ ամբողջ կեանքումս երբէք չեմ լսել ոչ ոքից Վագնէրի յիշեալ պիէսայի այդքան հրաշալի կատարումն.... Եւ զարմանալի զուգադիպութիւն. կնոջ փոքրիկ ձեռքերի տակ Վագնէրի երաժշտութեան վեհ, հզօր դաղափարները ինձ հետզհետէ և ակամայից ստիպում էին

կաւին մնում է զուրկ մի այդպիսի անհրաժեշտ օրգանից: Արտասահմանում գինու արդիւնաբերութեան վերաբերմամբ հրատարակվում են տասնեակ օրագրեր, որոնք պայմանաւորում են մասամբ այնտեղ այդ գործի առաջադիմութիւնը:

Այս օրերում կառավարութիւնը թոյլատրեց Ս. Պետերբուրգում Վասիլի Թայիրովին հրատարակել 1892 թուի յունվարից, առանց ցենզուրայի, «Вѣстникъ Винодѣлія» անունով ամսագիր:

Այդ գործի ապագայ ձեռնարկողներից մի քանիսի հետ ծանօթ լինելով, կարողացայ մօտ տեղեկանալ յիշեալ ամսագրի ծրագրին, որի հետ և կամենում եմ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին, որոնց թւում անշուշտ կան շատ այսպիսի գործով հետաքրքրվողներ: Ամսագրի ծրագիրը հետևեալն է լինելու. 1) Խաղողի այգեպանութիւն, 2) Ամերիկայի խաղողենիներ և հիբրիդներ, 3) Խաղողի հիւանդութիւնները և նրանց բժշկելը, 4) Ֆիլօկսէրա և կռիւ նրա դէմ, 5) Գինեգործութիւն և գինետան տնտեսութիւն, 6) Գինեգործութեան կողմնակի բերքերը և նրանցից օգտվելու միջոցները, 7) Գինու ֆալսիֆիկացիան, 8) Գինեգործական օտար դրականութեան համառօտ տեսութիւն, 9) Խրոնիկա, ուր տպվելու են թղթակցութիւններ, զեկուցումներ, ստատիստիական տեղեկութիւններ և այլն Ռուսաստանից և արտասահմանից, 10) Ուսումնարաններ, փորձառական կայարաններ և կուրսեր այգեպանութեան և գինեգործութեան, 11) Պտուղների և մրգերի գինեգործութիւն, 12) Կառավարչական կարգադրութիւններ այգեպանութեան, գինեգործութեան և գինեվաճառութեան վերաբերմամբ, 13) Մատենագրութիւն, 14) Հարցեր և պատասխաններ, 15) Յայտարարութիւններ:

Ամսագրին մասնակցելու խոստացել են Եւրոպայի մասնագէտ գիտնականներ, որոնցից կարող ենք անուանել՝ Միլլեարդէյին (Millardet)—Բորդոյի համալսարանի պրոֆէսոր, Պիուլիա (Pulliat)—Էկիւլլիի գիւղատնտեսական ուսումնարանի դիրեկտոր, Ֆոէքս (Foëx)—Մոնպելիէյի ազգային գիւղատնտեսական ուսումնարանի դիրեկտոր, պրոֆէսոր Վասսիլիէր (Vassillière), Նէսլէր—Կարլսրուէի գիւղատնտեսական փորձառական կայարանի դիրեկտոր, Գեոթէ—Հէյդենգէյմի (Ռենոս գետի վրա) գինեգործական և այգեպահական ուսումնարանի դիրեկտոր, Մախ—Ս. Միխելի գիւղատնտեսական դպրոցի դիրեկտոր, Օտտավիո և Էդուարդո Օտտավիոներ—իտալական գիւղատնտեսական և գինեգործական ամսագրի խմբագիրներ: Բացի վերոյիշեալ անձինքներից, կը մասնակցեն նոյնպէս և բոլոր յայտնի ռուս մասնագէտ հեղինակներ:

Ամսագրի տարեկան գինն է 5 ր., օտար քաղաք. 6 ր., արտասահմ. 7 ր.: Կէս տարվայ—3 ր., օտարաք.—3 ր. 50 կ., արտաս.—4 ր.:

Բաւական է կարդալ այդ ծրագիրը հասկանալու համար, թէ որքան հարցեր դեռ ևս մնում են անկատար և թէ որպիսի ծառայութիւն կարող է անել մի ուսեալ, տեղեակ և ազդու օրագիր: Ռուսաստանի հարաւային բոլոր երկիրները կարօտ են մի այսպիսի հրատարակութեան: Բայց Բեսարաբիան, Ղրիմը, Դոնը և նոյնպէս Աստրախանը փոքր ի շատէ զարգացնում են իրանց գինեգործութիւնը, հետևելով Եւրոպայի օրինակին, մինչդեռ մեր Կովկասը, Ռուսաստանի հարստութիւնների ամենախոշոր այդ մարգարիտը, ինչպէս նրան սովորաբար անուանում են, գնում է իր դարևոր սովորութեան հանդարտ քայլերով, որոնք, ինչպէս յայտնի է, ոչ մի երկրի, ոչ մի ազգի առաջադիմութեան պատճառ չեն դարձել:

Մեր խաղողը համարվում է առաջնակարգ, մեր մրգերը առատ, ընտիր, հռչակաւոր են, սակայն դրանցից պատրաստված խմիչքները չուկաներում ունեն ամենաստոր արժէք: Երբ պատահում են հիւանդութիւններ, մեր կորուստը լինում է ամենից մեծ:

Ցանկալի է, որ այդ ամսագիրը աջողութիւն ունենայ թէ ընդհանրապէս ամբողջ Ռուսաստանում և թէ ևս առաւել մեր Կովկասում, որ բոլոր մեր փոքր ի շատէ գինեգործութեամբ կամ գինեվաճառութեամբ պարապողները ստանան յիշեալ օրագիրը, որով նրանք հնար կունենան ծանօթանալ և օգուտ քաղել եւրոպական երևելի գինեգէտների փորձի արդիւնքներից: Միւս կողմից ցանկալի է ևս, որ մեր գինեվաճառները, այգեպանները, գինեգործները իրանք էլ մասնակցեն այս գործին, պարբերաբար հաղորդելով խմբագրին ամենահասարակ տեղեկութիւններ հետաքրքրելի դէպքերի մասին, կամ դիմելով խմբագրութեանը ծանր, վտանգաւոր կամ որ և է այլ հանգամանքներում, խորհուրդներ հարցնեն: Այս դէպքի համար և ծրագրի մէջ դրված է 14-րդ կէտը «հարցեր և պատասխաններ», որով խմբագրութիւնը խոստանում է բացատրութիւն տալ այնպիսի դէպքերում, երբ նրան կը դիմեն. անշուշտ՝ ամեն մի այդեպանին կարող են պատահել հետաքրքրելի հարցեր, նրա համար անհասկանալի երևոյթներ, հիւանդութիւններ իր այգիների մէջ և այլն, թող նա դիմէ այդ դէպքերում խմբագրութեանը, որն անմիջապէս կը պարզէ, կը բացատրէ թէ գիտութեան տեսակէտից և թէ փորձի հիման վրա:

Բացի այն նշանաւոր անձինքները, որոնք համաձայնել են մասնակցելու այդ ամսագրի մէջ, և որոնց անունը գրաւական է այդ ձեռնարկութեան լրջութեանը, մենք հարկ ենք համարում նկատել ևս, որ ինքն ապագայ խմբագիր-հրատարակողը, չը նայելով իր երիտասարդ հասակին, բաւական արդէն յայտի է իր գրուածքներով մասնագիտական գրականութեան մէջ: Վերջինս նրա աշխատութիւնը, որը դուրս եկաւ մօտ օրերումս «Библіографическій указатель по виноградарству и винодѣлію за 1755—1890 г.г.» ցոյց է տալիս, որքան բարեխղճութեամբ նա վերաբերվել է այդ ըստ երևոյթին չոր ու ցամաք առարկային:

Ցանկանում ենք կատարեալ աջողութիւն:

Պետերբուրգ. Գր. Տգր.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Սեպտեմբերի 18-ին

Ներկայ ամսի 10-ին բացվեց քաղաքիս հայ-կաթոլիկների եկեղեցական միդասեան տղայոց դպրոցը: Աւելի քան 15 տարի զուրկ լինելով դպրոցից, պէտք է երևակայել թէ որքան ուրախութիւն, որքան ցնծութիւն պատճառեց մեր համայնքին այդ դպրոցի բացումը: Արդէն 15 տարի է, որ չունէինք դպրոց: Մեր մանուկները մեծանում էին ինչպէս թռչուն առանց ուսման, առանց կրթութեան: Այժմ տեղիս հայ-կաթոլիկների նոր բացված դպրոցում կանոնաւոր դասաւանութիւնը շարունակվում է: Պարապում են երեք ուսուցիչներ, ուսանում են 30 տղաներ, բայց յոյս կայ, որ ուսանողների թիւը 60-ի հասնի, որովհետև գիւղերից դեռ չեն եկած: Դպրոցի համար հոգաբարձու ընտրվեցին արժանապատիւ Սահակ քահանայ Տէր-Աբրահամեան, պ.պ. Պօղոս Այտինեան, Պետրոս Բէբուրեան:

Աւանդելի առարկաները, դասաւանութիւնը և գրքերն այն են, ինչ որ ազգային հայոց դպրոցներում, կանոնաւոր և նոր մեթոդով: Ուսուցիչներն են՝ Սահակ քահանայ Տէր-Աբրահամեան՝ կրօն և քրիստոնէական վարդապետութիւն, պ. Կարապետ Առաքելեան՝ հայոց լեզու, թուաբանութիւն, երգեցողութիւն, վայելչագրութիւն. պ. Հայկ Արարաջեան՝ ռուսաց լեզու և վայելչագրութիւն: Պէտք է նկատել, որ այս դպրոցը հայ-կաթոլիկ համայնքի մէջ առաջին կանոնաւոր ուսումնարանն է, իսկ մինչև այժմ եղածները բոլորն էլ հին-խալիֆայական սիստեմով էին, որոնց մէջ թագաւորում էր ծեծը և հայհոյանքը:

Կովկասում և Անդրկովկասում հայ-կաթոլիկ համայնքը բաղկանում է 36 հազար հոգուց. թէև Սարատովում տպված 1890 թուի Եկեղեցական-թեմական օրացոյցում հայ-կաթոլիկների թիւը գրված է 23,541 հոգի, սակայն դա սխալ է, որովհետև այդտեղ չեն յիշված Արդուինի վիճակի մօտ 12 հազար հոգի և Թիֆլիսի, Քութայիսի, Սիմֆերօպոլի, Թէոդոսիայի, Խրիմի և այլ հայ-կաթոլիկները, նրանց երևի «լատինացած» համարելով: Դրանք զետեղված են 5 գլխաւոր վիճակներում, այն է՝ Ախալցխայի, Ախալքալաքի, Լոռուայ, Ալէքսանդրօպոլի և Արդուինի գաւառներում: Հայ-կաթոլիկները ունեն իրանց հոգևոր կառավարութիւնը Ախալցխայում և ստորադրված են Սարատովի եպիսկոպոսի իրաւասութեանը: Եւ այդ 36 հազար հոգուց բաղկացած համայնքը մինչև այսօր չունէր ոչ մի դպրոց.... Այո, այս որքան որ դառն է, նոյնքան ճշմարիտ իրողութիւն է...

Դեռ 1860 թուին հանգուցեալ Արարատեան խնդրամատոյց էր եղել Բարձրագոյն կառավարութեանը, որ իրաւունք տրվի հայ-կաթոլիկ հասարակութեան համար ունենալ հոգևոր դպրոց, որտեղ սովորէին քահանայացուները և այդ իրաւունքը նա ստացել էր և պահում էր մի շատ համեստ ուսումնարան, որտեղ ուսանում էին հասակաւոր տիրացուներ. դասատուն ինքը Հ. Արարատեանն էր, և սովորեցնում էր բացի կրօնից, իր յօրինած քերականութիւնը: Պէտք է ասել, որ Հ. Արարատեանի մօտ շատ քիչ բան կարելի էր սովորել, որովհետև ինքը չունէր այն ժամանակակից ուղղութիւնը, այլ սովորեցնում էր հին մեթոդով. Հ. Արարատեանի մահից յետոյ այդ խղճուկ դպրոցն էլ փակվեց և հասարակութիւնը մնաց առանց որ և է դպրոցի:

Տեսնելով այդ տխուր վիճակը, անցեալ 1890 թուին Պետրոս Բէբուրեան յորդորեց հասարակութիւնը ուսումնարանի անհրաժեշտութեան մասին: Նրա առաջարկութիւնն ընդունվեց: Քաղաքիս հայ-կաթոլիկ առաջնորդ գերապատիւ Պողոս վարդապետ Նահապետեան ցանկանալով ապահովել ապագայ դպրոցի գոյութիւնը, նուիրեց մի հազար ռուբլի. գերապատիւ հօր բարի օրինակին հետևեցին և ուրիշները, իւրաքանչիւրը նուիրելով 5 ռուբլուց սկսած մինչև 100 ռուբլի: Գոյացաւ ընդհանուր գումար 1380 ռուբլի և ստորագրութիւնը շարունակվում է դեռ ևս: Բացի այս ստացված է մի երկու գիւղի հասարակութիւններից ցորեն և գարի, որոնց մասին, ի հարկէ, հոգաբարձութիւնը կանոնաւոր հաշիւ կը տայ:

Շերակեցի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, երկուշաբթի, չը կայացաւ պ.պ. Եղիազարեանի և Ափրիկեանի կօնցերտը Թիֆլիսի թատրոնում, որովհետև մեծ տօնի նախընթաց գիշերը թոյլատրված չեն կօնցերտներ: Պարոնների կօնցերտը կը կայանայ շաբաթ օր, նոյն քաղաքային թատրոնում: Կօնցերտում կը մասնակցի և երգչուհի տիկին Սավէլիեվա: Պ. Ափրիկեան, որը երգել է արդէն Իտալիայում, կը մասնակցէ Սաչինարի բեմական ազգանունով: Կօնցերտը իր պրոգրամի կողմից վերին աստիճանի գրաւիչ է. ի միջի այլոց կը կատարվեն կտորներ Դարգոմիժսկու, Բիզէի, Դոնիցետտիի, Վէրդիի, Բոսինիի, Գունոի, Մօցարտի, Գլինկայի և Չայկովսկու հեղինակութիւններից: Կը ցանկանայինք որ հասարակութիւնը թատրոն գալով, ինքն համոզվէր որքան գեղեցիկ են Եղիազարեանի բարիտոն ձայնը և Ափրիկեանի տէնոր ձայնը:

—

Կարսի Նահանգի Բէգլի-Ահմէդ գիւղից մեզ գրում են. «Հաստատ աղբիւրից լսում ենք, որ Կարսի Նահանգի հայ գիւղերի յոյն, մալական և քիւրդ տանուտէրեր և ստարշիններ մինչև յունվար ամիսը կարձակվեն իրանց պաշտօններից և Նահանգի հայ գիւղերը նորից կը կառավարվեն իրանց նախկին ձեով, առաջվայ նման՝ այն է հայ համայնքներից ընտրված տանուտէրերով, դատաւորներով և ստարշիններով:»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երեք ամիս փակ մնալուց յետոյ՝ ամսիս 1-ին արդէն մեր քաղաքի հայոց ուսումնարանների դռները բացվել են: Թէ Թեմական և թէ Գայիանեան դպրոցում կանոնաւոր ուսումն արդէն սկսված կարելի է համարել, թէև Նահապետական սովորութեան համաձայն

մտածել Պրուդոնի իմ այն օրվայ կարդացած և չը հասկացած աստուածային թէօրիայի մասին.... Ցանկարծ ինձ թվաց թէ սկսում եմ ըմբռնել Պրուդոնի միտքը, ժամանակաւորապէս թմրութեան մէջ եղած ուղեղս կարծես սկսում է հասկանալ այն, ինչ որ մի քանի ժամ առաջ անպայման հրաժարվում էր ըմբռնելուց.... Այո, ես շարունակում եմ համ ագահութեամբ լսել Վագնէրի երաժշտութեան աստուածային հնչիւնները, համ յամառութեամբ մտածել Պրուդոնի աստուածային թէօրիայի իմաստի մասին, և երբ Էվէլինայի հրաշագործ ձեռքերի տակ հնչեց վերջին հզօր ակորդը՝ ես կարծեցի որ կը գժվեմ և բարձրաձայն ուղեցի աղաղակել. «Հասկացայ, ըմբռնեցի, Էվէլինա, իմ Էվէլինա, քեզ եմ պարտական....»

Սակայն ես չաղաղակեցի, այլ անշարժ, լուռ, մի տեսակ աստուածպաշտական զգացմունքի մէջ ընկղմված, սառած ու պապանձված մնացի.... Սիրոս սաստիկ բաբախում էր, ամբողջ մարմինս սառել էր, ես զգում էի թէ սաստիկ դունատվել եմ.... Ցուղմունքիս չափ ու սահման չը կար....

Իսկ Էվէլինա իր վերջին ակորդը վերցնելուն պէս, արագ շարժուածքով վեր էր կացել աթոռից, ծածկել էր պիանօի խուփը և անշարժ կանգնել էր պիանօի մօտ: Մի ձեռքով պիանօի վրա յենված, իր առաջվայ ժպիտը երեսին, նա մի տեսակ ինքնաբաւականութեամբ ինձ վրա էր ուղղել իր գեղեցիկ կապոյտ աչքերի հայեացքը: Ինձ թվաց թէ նրա շնորհալի կազմուածքը ծածկող երկար շէյֆով «մատինէի» բաց կապոյտ գոյնը՝ ուրիշ բան չէր, եթէ ոչ նրա կապոյտ աչքերի արտափայլումն, ինձ թվաց թէ նրա աչքերի մոգ կապոյտ լոյսը՝ բաց կապոյտ գոյնով էր լուսաւորել նրա ամբողջ զգեստը.... Նա հրաշալի էր այդ դիրքի մէջ:

Ես այլ ևս չը կարողացայ տիրապետել ինձ. ես վեր թռայ տեղիցս, արագ քայլերով մօտեցայ նրան, իմ երկու ձեռքերով բռնեցի նրա երկու փոքրիկ ձեռքերը և հերթով սկսեցի համբուրել նրանց.... Դա առաջին համբոյրն էր, որ ես դրոշմում էի նրա ձեռքերի վրա....

—Ասեցէք խնդրեմ, այդ ի՞նչ էք անում, ասեց նա փոքր ինչ նեղացած.

—Ի՞նչ.... Անմիջապէս կը բացատրեմ ձեզ. այդ հրաշագործ երկու փոքրիկ ձեռքերի նուագելուն եմ պարտական, որ մի կէս ժամում ես հասկացայ այն, ինչ որ ժամերով չէի կարող ըմբռնել. ձեր ձեռքերով կատարած Վագնէրի երաժշտութեանն եմ պարտական, որ թմրած ուղեղս արթնացաւ, լուսաւորվեց մի նոր և ինձ համար անսովոր մտաւոր լուսով....

—Իսկ դուք գիտէք, բարեկամ, ընդմիջեց նա ինձ, ուղիղ աչքերիս մէջ նայելով և մեղմ կերպով յետ քաշելով իր ձեռքերը իմ ձեռքերից, գիտէք որ մի քանի ժամանակից ես էլ սկսեցի աւելի լաւ հասկանալ Շոպէնի երաժշտութիւնը և աւելի լաւ արտայայտել նրան....

—Ի՞նչ ժամանակից, ասեցէք Էվէլինա, ի՞նչ ժամանակից....

—Այն ժամանակից.... երբ ես սկսեցի.... սիրել և տանջվել, արտասանեց նա հազիւ լսելի ձայնով....

Սիրոս անդուսպ կերպով սկսեց բաբախել, ես խօսք չէի գտնում պատասխանելու....

—Կարծեմ որ Նիցցայի լրագրի երաժշտական պարոն բէցէնդէնտը, կարող է այժմ գոհ լինել ինձանից, աւելացրեց նա խորամանկ ձեով.

Երկուսս էլ չը կարողացանք զսպել մեր բարձր ծիծաղը: Երջանկութեան գագաթնակէտին հասած՝ խօսքերը պակասում էին մեղ երկուսիս: Օրվայ տպաւորութիւնները չափից դուրս խիստ էին և անսպասելի, երկուսս էլ զգում էինք թէ չափից դուրս յուզված ենք, որպէս զի կարողանայինք այդ նոյն երեկոյ շարունակել հանգիստ, բարեկամական խօսակցութիւնը:

Երջանիկ ժպիտը երեսներին իրար ձեռքը պինդ սեղմելով, կարողացանք միայն արտասանել.

—Ցը տեսութիւն Էվէլինա.

—Բարի գիշեր, անգին բարեկամ:

—

Ես շտապով վերցրի գլխարկս և փախայ Էվէլինայի բնակարանից.... Այո, փախայ: Ես չէի գնում, այլ վազում, փախչում էի: Ես շտապում էի տուն, որպէս զի մենակ լինեմ, մենակ զգամ մենակ վայելեմ իմ անսահման երջանկութիւնս....

Ես խուսափում էի գազի լապտերներով լուսաւորված փողոցներում անցուդարձ անող մարդկանց հայեացքներից.... Ես ուզում էի մենակութեան մէջ ծածկել երջանկութիւնս: Ինձ թվում էր թէ դէմքս ոգևորութեան առանձին արտայայտութիւն, երջանկութեան արտասովոր փայլ էր կրում, որը պիտի մատնէր ինձ, պիտի մատնէր իմ ներքին աշխարհի անսահման յուզմունքը....

Տուն հասնելուն պէս, ես շտապով վառեցի ճրագը և ինչպէս մի սիրահարված երիտասարդ դողալով բաց է անում իր սիրուհու նամակը, նոյն տենդային անհամբեր զգացմունքով բաց արի ես սեղանի վրա դրված Պրուդոնի գիրքը: Արդեօք բոպէական ոգևորութեան և սիրոյ զգացմունքի ազդեցութեան տակ ծագած անձնախաբէութիւն էր դա,—թէ ճշմարիտ՝ կնոջ ձեռքերով կատարված Վագնէրի երաժշտութիւնը կարողացաւ բացատրել ինձ Ֆրանսիացի հեղինակի խոր փիլիսոփայական, ինձ համար մինչև այդ բոպէն մութ մնացած մտքերը....

Ես ագահութեամբ սկսեցի կարդալ նոյն գլուխը, որը մի քանի ժամ առաջ տասն անգամ

ընդունելութիւնները դարձեալ շարունակվում են։ Այս տարի թեմական դպրանոցի ուսուցչական խմբի մէջ այնքան զգալի փոփոխութիւն չէ եղել. հին խումբը մնում է, բացի մաթեմատիկայի ուսուցչից։ Իսկ Գայիանեան օրիորդաց դպրոցում հինգաւոր փոփոխութիւններ եղան։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են սեպտեմբերի 24-ից հետեւեալը. «Այսօր Էջմիածնում հիւր էր ֆրանսիական հանրապետութեան նախագահ Սադի-Կարնոյի քոյրը։ Երեմիա սրբազանը ամեն կերպ աշխատեց լաւ ընդունել տիկնոջ։ Գոհ էր մնացել տիկինը, տանելով Էջմիածնից լաւ տպաւորութիւններ։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են, որ Էջմիածնում մեծ պատրաստութիւններ են տեսնում սեպտեմբերի 28-ին հանդիսաւոր կերպով Էջմիածնի Գէորգեան ճեմարանի տարեդարձը տօնելու։»

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ մեզ հաղորդում են, որ ամսիս 18-ին կայացաւ այդ քաղաքում կաթողիկոսական պատգամաւորների ընտրութիւնը։ Ընտրվեցան՝ պ. Շահնազարեան Դէ-Շապուր և պ. Պապայեան։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ սեպտեմբերի 16-ին կովկասեան կառավարչապետ, գեներալ Շերեմետեվ ժամանեց Դերբէնդ։ Երկու օրից յետոյ Նորին բարձր գերազանցութիւնը այդ քաղաքից Նորից Ղուբա ուղեորվեց։

—

Մեզ հաղորդում են ԴԵՐԲԷՆԴԻՑ հետեւեալ լուրերը. «Երկարատև և յորդառատ անձրեւները վերջին օրերս միայն դադարեցին։ Այդ ինների անձրեւից հասցրած վնասը խիստ զգալի է Դերբէնդի համար։ Այդ անձրեւների պատճառով այս տարվայ խաղողից խիստ վատ բերք է սպասվում։ Մեր այն գինիները, որոնք տարված էին Նիժնի-Նովգորոդի տօնավաճառը, այնքան էժան գնով են ծախվել, որ չատերը հազիւ իրանց ծախսը կարողացել են հանել։»

—

«Нов. Обозр.» լրագիրը, նոր խմբագրութեան ղեկավարութեան տակ, ընդունել է նոր ձեւեր լուրերը հաղորդելու համար։ Օրինակ, «Մշակի» չաթիվայ համարում տպված Բագուի թղթակցութեան մէջ գրված էր, որ Կարա-Մուրզայի խումբը դիտաւորութիւն ունի եկող 1892 թուին այցելել Ռուսաստան, Գերմանիա և Աւստրիա, այդ երկիրներում կոնցէրտներ տալու համար,—և ահա «Нов. Обозр.» լրագրի կիրակեայ համարում կարդում ենք նոյն լուրը հետեւեալ ձեւով. «Մեզ հաղորդում են, որ Կարա-Մուրզայի խումբը և այլն....» Կարծում ենք, որ աւելի ճիշդ կը լինէր ասել. «Մշակ» լրագրին հաղորդում են», կամ գոնէ «Հայոց տեղական լրագիրներին հաղորդում են»

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Գալուստ Գիւլբէնկեանից (Calouste Gulbenkian) նրա Քրանսերէն գիրքը «La Transcaucasie, et la péninsule d'Apchéron» վերնագրով։ Այդ ճանապարհորդական յիշողութիւնները գրված են վերին աստիճանի գրաւիչ կերպով և ծանօթացնում են ընթերցողին մեր երկրի բոլոր ազգերի կեանքի և երկրի բնական հարստութիւնների հետ։ Գիրքը տպված է Պարիզում, ներկայ 1891 թուին։ Տպագրութիւնը չատ մաքուր է և գեղեցիկ։ Գիրքը բաղկացած է 336 երեսներից և նրան կցված է մի թէև փոքրիկ, բայց մեծ խնամքով կատարված քարտէզ, որը ներկայացնում է մեզ Կովկասի մի մասը, ամբողջ Անդրկովկասը և Թիւրքաց Հայաստանի մի մասը։ Գուցէ մի այլ անգամ, գիրքն ամբողջապէս կարդալուց յետոյ, մեզ աջողվի ծանօթացնել ընթերցողներին նրա բովանդակութեան աչքի ընկնող տեղերի հետ։

—

Կիրակի, սեպտեմբերի 29-ին, ռուսաց դրամատիական խումբը Թիֆլիսի քաղաքային թատրոնում ներկայացրեց Շպաժինսկու «Въ забытой усадьбѣ» հինգ գործողութեամբ դրաման, իսկ վերջում ներկայացվեց «Դոկտոր Կոխի մօտ Բերլինում» 1 գործողութեամբ վոդեվիլը։ Ռուսաց ներկայ դրամատիական խումբը, ինչպէս երեւում է, բաւական լաւ ոյժերից է բաղկացած, որոնցից մանաւանդ այդ երեկոյ աչքի էին ընկնում իրանց լաւ և մտածված խաղով Զվեզդին և Տօկարեվա դերասանուհիները, իսկ դերասաններից աջողութիւն ունեցան Կրամսկոյ-Սէլսկիյ և Ֆօրկատտի։ Թատրոնը համարեա լի էր։

—

Պետական ճանապարհների ժամանակաւոր վարչութիւնը, որպէս հաղորդում է «Нов. Обозр.» լրագիրը, դիմեց անդրկովկասեան երկաթուղու վարչութեանը առաջարկելով վերջինին իր կարծիքն յայտնել դանդան տեսակ բեռների և մարդատար գնացքների տարիֆը պակասեցնելու մասին։ Որպէս յայտնի է, անդրկովկասեան երկաթուղու տարիֆը բարձր է ռուսաց բոլոր երկաթուղիների տարիֆից։ Արդէն չատերը, որոնցից կախված է այդ հարցի որոշումը, յայտնել են իրանց կարծիքը յօդուտ տարիֆի պակասցնելուն։ Ցանկալի կը լինէր, ասում է լրագիրը, հաւասարեցնել այստեղի տարիֆը ռուսաց երկաթուղիների տարիֆին։

—

«Моск. Вѣд.» լրագրին Պետերբուրգից հաղորդում են հետեւեալը. «Թիւրքաց կառավարութիւնը արտաքին գործերի մինիստրին ուղարկեց բազմաթիւ պատճէններ այն դոկումենտների, որոնք պահված էին Թիւրքաց արխիվներում և որոնք վերաբերում են կալուածական սեփականութեանը Բաթումի և Կարսի մէջ։ Այդպիսով Բաթումի և Կարսի շրջաններում վաղուց յարուցված կալուածական խնդրի կանոնաւորումը չուտով ցանկալի վախճան կունենայ։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՆԷԼ

Զարլզ Էդվարդ Պարնէլ ծնվեց Ավստրէլիում, Վիրկլօուի կոմսութեան մէջ 1846 թուին. հետեւաբար նա մեռաւ 45 տարեկան հասակում։ Նրա մայրը Ամէրիկայի ընիկ էր, իսկ ինքն Պարնէլ, չը նայելով որ իրլանդական կաթոլիկ կուսակցութեան գլուխ էր համարվում, բողոքական էր։ Քաղաքական գործունէութիւնը նա վաղ սկսեց. դեռ չերեք (գլխաւոր դատաւոր) եղած ժամանակ իր հայրենի կոմսութեան մէջ, Կէմբրիջեան համալսարանն աւարտելուց յետոյ, և ապա, պարլամենտը մտնելով, չնորհիւ իր եռանդուն գործունէութեան, Գլադստոնի մինիստրութիւնից կարողացաւ իրաւունք ձեռք բերել Իրլանդիայում հողային լուրջ բէֆորմներ մտցնելու համար։ Անկիրկիւղ և հաստատամիտ մարտնչողի գլխին վերջին տարիներս բազմատեսակ բամբասանքներ թափվեցան։ Նրա թշնամիները անողորմ կերպով զրպարտեցին նրան «Times» լրագրում, և նա այդ լրագրի դէմ դատ սկսեց, որը վերջացաւ նրանով, որ վերոյիշեալ լրագրի խմբագիրը մեղադրվեց և 5,000 ֆունտ ստերլինգ տուգանքի ենթարկվեց։ Անցեալ տարվայ վերջը փորձ եղաւ կրկին սեւացնել «Իրլանդիայի թագաւորին», և այս անգամ նրա թշնամիների փորձը աջողութեամբ պսակվեց։ Մեր ընթերցողները յիշելիս կը լինեն, որ կապիտան Օշի մեղադրեց Պարնէլին իր կնոջ հետ յանցաւոր յարաբերութիւններ ունենալում, որի պատճառով Պարնէլ կորցրեց, թէպտեւ ժամանակաւորապէս, իր կուսակցութեան նշանաւոր մասի, նոյնպէս և Գլադստոնի համակրութիւնը։

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թիւրքաց լրագիրների խօսքերով, Թիւրքաց չորրորդ զօրաբաժնի հրամանատար Զէկի-փաշա այժմ Ալաշկերտումն է գտնվում և զբաղված է քրդաց ութ զօրագնդերի վերջնական կազմակերպութեամբ։ Նրա նախաձեռնութեամբ զինուորական մի առանձին յանձնաժողով է կազմված քիւրդ աշիրէթներից (ազատ բէկեր), որոնց թիւում գտնվում են և զիլանլի, այդերանլի, սելաչլի, զարափափալի ցեղերի ցեղապետները։ Ցանձնաժողովն արդէն սկսել է իր գործունէութիւնը, բոլոր պատրաստի ոյժերի ցուցակը կազմելով։ Կազմակերպված զօրագնդերից լուսանկարներ կը հանվեն և Կ. Պոլիս կուղարկվեն։

—«Daily News» լրագրի Աթէնքի թղթակիցը, Կրետէ կղզու բնակիչների մէկից ստացված նամակի հիման վրա, հաղորդում է, որ նոր գեներալ-նահանդապետ Մահմուդ-Զէլալ-Էդդին-փաշայի գալուստը չը հանգստացրեց Կրէտէի ազգաբնակութիւնը, այլ ընդհակառակն մեծ յուզում առաջ բերեց կղզու բնակիչների մէջ, որոնք նորեկ գեներալ-նահանդապետից չատ բան էին սպասում, բայց ոչինչ չը ստացան։ Կոսսամոից հաղորդում են, որ այնտեղ այս օրերս հասել են 70 լաւ զինուորված մարդիկ երեք նաւերով և 40 զինուորված մարդիկ ափ են իջել մի ուրիշ կէտում։ Նրանք բոլորն էլ ուղեորվել են Սֆակիա և Ապոկորոնա։ Երկիւղ կայ, որ չուտով մեծ արիւնհեղութիւններ կը լինեն։ Բազմաթիւ տեղերից զապթիաները հաղորդում են զինուորված ապստամբների երեւալու մասին։ Գրաստ և ձիթապտուղ մեծ քանակութեամբ կողոպտվում է։ Եթէ որ կղզու բնակիչները հաւատացած լինեն, որ Անգլիան յանձ կառնի կղզու վրա հովանաւորութիւնը, նրանք 24 ժամում կը ստորագրէին հովանաւորութիւն խնդրող յայտագիրը։

—Ունգարական լրագիրները հաւաստի աղբիւրներից հաղորդում են, որ Աւստրօ-Ունգարիայի արդարադատութեան երկու մինիստրները նորերս պետական մի գրութիւն կազմեցին թագաժառանգութեան կարգի մասին։ Էրցհերցոգ Կարլ-Լիւդվիգ, իր զառամեալ հասակի պատճառով, հրաժարվեց գահից յօդուտ իր որդու։ Պետական ակտը, երևի, կը հրատարակվի այս տարի և անմիջապէս դրանից յետոյ թագաժառանգ կը նշանակվի։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 սեպտեմբերի։ Լուր է տարածված, որ չուտով կը քննվեն նոր երկաթուղային շէնքերի և հասարակական աշխատանքների նախագծեր, որպէս զի արդէն ներկայ աշնանը կարելի լինի աշխատանքի դուռ բանալ սովեալ ազգաբնակութեան համար։

ՎԱԼՊԱՐԱԶՍՕ, 27 սեպտեմբերի։ Արգէնտինեան կառավարութիւնը ծախեց բարոն Հիրշին 1000 քառ. մղոն գետին Շակո նահանգում, մղոնը 1000 պէզոսով, հրէական կոլոնիա հիմնելու համար։

ԱՄՈԻ, 27 սեպտեմբերի։ Զինական մի գաւառամասում, որը այդ քաղաքից 40 մղոն հեռաւորութեան վրա է գտնվում, ապստամբութիւն ծագեց։ Զինական ռամիկ մարդիկ, հասարակական դուռմարների յափշտակութեան պատճառով գրգռված, յարձակվեցան արքունական աղի պահեստների վրա, սպանեցին մի քանի մանդարիններին և բազմաթիւ մանր պաշտօնեաներին։ Փողոցային կռուից յետոյ ապստամբութիւնը ճնշվեց Ամոից ուղարկված զօրքերի ձեռքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 սեպտեմբերի։ «Нов. Время» լրագիրը լսել է, որ չինաց կառավարութիւնը հաղորդել է մեր արտաքին գործերի մինիստրին, որ ամեն միջոցներ ձեռք են առնված ռուսաց հպատակների կեանքը և գոյքը պաշտպանելու Չինաստանում։ — Երէկ վախճանվեց պետական խորհրդի անդամ փոխ-ծովապետ Պէշչուրով։

ՊԱՐԻԶ, 29 սեպտեմբերի։ Մինիստր Կոնատան մի ճառ արտասանեց Նիմում, որի մէջ յայտարարեց, թէ հանրապետութիւնը համաձայն է, որ միապետականները իր հետ միանան, սակայն այն

ծայրից ծայր կարդալով՝ չէի հասկացել.... Եւ իրաւ, այս անգամ ես կարդացի և հասկացայ։

Հիացմանս չափ չը կար....

Սակայն ուշ էր. ես ծալեցի գիրքը, ես սաստիկ յոգնած էի այդչափ յուզմունքներից։ Հանելով զգեստներս և պառկելով անկողնիս մէջ, ես շարունակում էի կրկնել. «Ի՞նչ զարմանալի զուգադիպութիւն.... Պրուդոն և Վագնէր.... Շոպէն և սէր։ Երաժշտութիւնը սիրոյ զգացմունքի ներգործութեան տակ բացատրում է փիլիսոփայական միտքը, ուրիշ կողմից սիրոյ խոր և անկեղծ զգացմունքը բացատրում է երաժշտական հեղինակի մտքերի իմաստը, ըմբռնել է տալիս նրա մաքուր ոգեորութիւնը.... Պրուդոն, Վագնէր, Շոպէն, երաժշտութիւն, փիլիսոփայութիւն և մարդկային սէր,—իրարից տարբեր, իրար հակառակ հոգեկան ոյժերի ի՞նչ զարմանալի փոխադարձ ներգործութիւն....

—

Այնուհետև, մի ամիս շարունակ, ես ամեն օր էի տեսնվում Էվէլինայի հետ։ Ամեն երեկոյ ես գնում էի նրա մօտ և մենք կամ դուրս էինք գալիս զբօսնելու, երբ եղանակը լաւ էր, գնում էինք կամ ոտով մօտակայ գիւղերից մէկը, կամ չոգենաւով էինք պտտվում Ցիւրիխեան ծովակի վրա, կամ եթէ եղանակն աննպաստ էր, ես մնում էի Էվէլինայի մօտ և ամբողջ երեկոյ մենք անց էինք կացնում միասին։ Նա ածում էր պիանոի վրա, այնուհետև մենք միասին կարդում էինք և խօսում ու վիճում էինք կարդացածի մասին.... Պատահում էր որ մենք երազում էինք ապագայի մասին, մեր երևակայութեան մէջ ստեղծելով այն ապագայ կեանքը, որը միասին պիտի վայելէինք ծննդավայրումս.... Այդ երջանիկ երեկոներից մէկումն էր, որ նա խոստովանվեց ինձ որ եթէ եկել էր արձակուրդներին Ցիւրիխ, իր համար մի բոլորովին անծանօթ քաղաք,—այդ այն պատճառով էր, որ նա ոչ Պարիզում, ոչ Լօնդոնում չը կարողացաւ մոռանալ երիտասարդի համակրութեամբ լի հայեացքը Լիօնի կայարանում....

Սակայն ժամանակ առ ժամանակ նկատվում էր Էվէլինայի ակնարկութիւններից, որ նա թէև սիրում, պաշտում էր երաժշտութիւնը, բայց յոգնել է արտիստուհու և դասատուի ասատանդական կեանքից.... Ես երբէք չեմ մոռանայ մի դէպք, որը շատ պերճախօս կերպով համոզեց ինձ նրա հակումների մասին դէպի երջանիկ, խաղաղ ընտանեկան կեանքը և նրա այժմեան արտիստական կեանքից յոգնած լինելու մասին։

Ես բարձր ձայնով կարդում էի Պելլերտանի «La mère» սրտաշարժ գրուածքը. Էվէլինա լսում էր մեծ ուշադրութեամբ.... Ցանկարծ ես նկատեցի որ նա իր թաշկինակը դէպի աչքերն է տանում.... Ես նայեցի նրա վրա. նրա հրաշալի կապոյտ աչքերը լի էին արտասուքով....

—Էվէլինա, այդ ինչ է պատահել ձեզ, հարցրի ես....

—Ո՛րքան երջանիկ է նա, հեղինակի նկարագրված այդ մայրը, եղաւ պատասխանը։

—

Մեր երջանիկ երեկոներին չուտով աւելացաւ և մի նոր զբաղմունք, որն անասելի բաւականութիւն էր պատճառում ինձ։ Մի օր մտնելով Էվէլինայի մօտ, ես հաղորդեցի նրան իմ վերաբերմամբ մի ուրախալի լուր. Կ. Պոլսի այն լրագրի խմբագիրը, որի աշխատակից էի ես, տեղեկացնում էր ինձ, որ իմ յօդուածները սկսում են հետզհետէ գրաւել իրանց մտքերի նորութեամբ հասարակութեան ուշադրութիւնն ու նրա համակրանքը։

—Գիտէք, Էվէլինա, ես ձեզ ճանաչելուց առաջ էլ էի գրում, բայց իմ յօդուածները թոյլ, անգոյն էին, աղքատ էին մտքերով. ձեր սէրը մի նոր ոյժ տուեց իմ գաղափարներին, նոր կեանք ներշնչեց իմ մէջ և այժմ ես ձեզ եմ պարտական, որ գրիչս դարձել է աւելի բեղմնաւոր, մտքերիս պարարը աւելի հարուստ.... Այսուհետև իմ կոչումը որոշված է. ձեր սիրոյ ներգործութեան տակ ես վերջնականապէս հասկացայ թէ իմ կոչումն է՝ լինել հրապարակագրող. և ներշնչվելով ձեզնով, պիտանի լինել իմ ազգին՝ ահա իմ ամենաջերմ տենչանքս....

—Բարեկամ, ես ուզում եմ, ես պէտք է սովորեմ հայերէն, յանկարծ վրա բերեց Էվէլինա, ես պէտք է սովորեմ ձեր լեզուն, որպէս զի կարողանամ կարդալ ձեր յօդուածները։ Մի մերժէք ինձ այս չնորհը. պարապեցէք ինձ հետ ձեր մայրենի լեզուով.

Եւ այն օրից մեր երեկոները ինձ համար աւելի էլ թանգագին դարձան. ես սկսեցի պարապել Էվէլինայի հետ հայերէն լեզուով և քանի գնում աւելի և աւելի էի զմայլվում նրա արտակարգ ընդունակութիւնների վրա. կարճ ժամանակում նա բաւական մեծ առաջադիմութիւն էր արել հայերէն լեզուի ուսումնասիրութեան մէջ։

Սակայն արձակուրդների ժամանակը վերջանում էր. Էվէլինա պէտք է չուտով ուղեորվեր Նիցցա, որտեղ արդէն սկսվում էր ձմեռվայ սեզոնը։ Ամեն ձմեռ նա սովորաբար Նիցցայումն էր անցնում, պարապելով դասատուութեամբ և կոնցէրտներ տալով. իսկ ես դեռ ևս մի երկու, երեք տարի պիտի մնայի կամ Ցիւրիխի, կամ գերմանական մի այլ համալսարանում։

(Կը շարունակվի)

պայմանով միայն, որ միապետականները պէտք է հաստատեն իրանց հաւատարմութիւնը։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 29 սեպտեմբերի։ Պատգամաւոր Պէտրի, ողջունելով չրջանային յանձնաժողովի կողմից փոխարքային այդ վերջինի վերադարձի և իր պաշտօնը ստանձնելու առիթով, յայտնեց, որ էլզաս-լոտարինգցիները, կայսրութեան պատկանելութեան անյողդողդ հողի վրա կանգնելով, իրանց վարմունքով միշտ կարդարացնեն կայսերութեան հաւատարմութիւնը, որ նա ցոյց տուեց անցագրային դժուարութիւնները վերացնելով։ Փոխարքան պատասխանեց, որ այդպիսի զգացմունքների արտայայտութեան մասին ինքն կը հաղորդէ կայսրին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 27-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ	94 ր.	80 կ.
Բերլինի վրա	100 մարկ —	46 »	45 »
Փարիզի վրա	100 ֆրանկ —	37 »	45 »
Ոսկի	— — արժէ	7 »	60 »
Մաքսային կուպօններ	—	151 »	25 »
Արծաթ	— — —	1 »	14 »
Բորսային դիսկօնտներ	—	5½ »	7½ »
Պետ. բանկի 5% տոմս	1 չրջանի	102 »	87 »
— — — —	2-րդ —	103 »	25 »
— — — —	3-րդ —	— »	— »
— — — —	4-րդ —	— »	— »
— — — —	5-րդ —	— »	— »
— — — —	6-րդ —	102 »	75 »
6% ոսկեայ բէնտա		155 »	75 »
4% ոսկեայ փոխառութիւն		— »	— »
Արևելեան 5% փոխառ.	1-ին չրջ.	— »	— »
— — — —	2-րդ —	101 »	25 »
— — — —	3-րդ —	102 »	50 »
Ներքին 5% առաջին փոխառութ.		237 »	— »
— — երկրորդ —		220 »	50 »
Պետական. երկաթուղային բէնտա		103 »	62 »
5½% բէնտա		— »	— »
4% ներքին փոխառութիւն		96 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		100 »	— »
Ազն. կալ. բանկի խաղարկութան գրաւ. թղթ.	— —	101 »	50 »
5½% վկայակ. գիւղ. հող. բանկի.		105 »	50 »
4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.		146 »	25 »
— — —	թղթադ.	100 »	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.		101 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		101 »	— »
Օդէսայի — —		101 »	— »
Թիֆլիսի — —		— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.		— »	— »
— — Ռոստովի	— —	— »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ աւարտած և վկայական ստացած տիկին Շուշանիկ ԵԻԱՆ-ԳՈՒԼԵԱՆ տալիս է Բագու քաղաքում ԿԱՐ ու ՉԵԻԻ դասեր, մատչելի գներով, ԳԼՕԳԶԻՆՍԿՈՒ մեթօդով, թէ իր մօտ և թէ տներում։

Հասցէն. ԲԱԳՈՒ, Պարապետ, տուն Լալայեանցի։ 2—5

Ս. Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովից պաշտօնապէս ընդունված նոր դասագիրք „Թուաբանական խնդիրներ և օրինակներ“ Գրիգորիս Երզնկեանի՝ տարրական դասընթացք ա. և երկ. տարի, վաճառվում է Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում, գինը 30 կ., դումարով գնողներին 20% զիջ. 3—3 (Ե.)

Մամուլի տակից լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցում ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Վարդանի և հայոց պատերազմի համար, թարգ. Հ. Ղուկասեանց։ Գինը 60 կոպէկ։ Նոյն տեղը վաճառվում են՝

Ա. Արասխանեանց „Արևելեան ազգերի հին պատմութիւնը“ . . . 1 ր.
Վ. Փափազեան „Գինեգործի աղջիկը“ (Թիւրքահայոց կեանքից) . . 15 կ.

Դումարով գնողները սովորական զիջումն ստանում։ 3—3 (Ե.)

Թիֆլիսի կենտրօնական և Կովկասեան գրավաճառանոցներում և Բագու Թառայեանի գրավաճառանոցում վաճառվում են՝

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ

հետևեալ հրատարակութիւնները՝

1) «Համլէտ», ողբերգութիւն . . . . . գինն է 60 կոպ.
2) «Աննա Սարոյեան», վէպ. . . . . — 30 »
3) «Երեք քաջեր», կատակ. . . . . — 20 »
4) «Այ քեզ օյին», վոդեվիլ. . . . . — 20 »
5) «Էլիզայի վիշտը», վէպիկ . . . . . — 10 »
6) «Էմմանուէլ Մանիի թաղումն» . . . . . — 5 »

Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ. Василію Камальянъ. Ճանապարհածախսը հրատարակչի վրա է։ 2—5

Z—BOUQUET & Z—ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆ

ՆՈՐ, ՇԱՏ ԹԱՆԳԱԳԻՆ, ԲԱՑՑ ՇԱՏ ԵՒ ՆՈՒՐԲ ՕԾԱՆԵԼԻՔ

Ր. ԿԵՕԼԼԷՐԻ և ԸՆԿ. ԳՈՐԾԱՐԱՆԻՑ, ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

առաջարկվում է որպէս

ՌՈՒՍԱՅ ՊԱՐՖԻՄԷՕՐԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Ծախվում է գաւառներում բոլոր ամենալաւ մագազիններում 3—5 (№ 3)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՂԶԼԱՐԻ հայոց երկդասեան ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԸ հրաւիրում է ՁԵՌԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ 7 դասի համար դասատուութեան իրաւունք ունեցող ՎԱՐԺՈՒՀԻ 105 ռուբլի վարձատրութեամբ։ 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ այսուհետև ընկերութեանս հետ գործ ունեցողները կարող են դիմել ընկերութեանս գրասենեակը (Բարոնսկայա փողոց, տուն Սահակեանի), որը բաց է ամեն օր առաւօտեան 10—2 ժամը։ 2—3

Ը. կարգի մի ՎԱՐԺՈՒՀԻ կամենում է տեղ ունենալ հայ գպրոցներում. համաձայն է գնալ ուրիշ թեմ։ Հասցէն „Մշակի“ խմբագրատանը։ 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՍՈՒՏ ՃԳՆԱՒՈՐ“

Հեղինակութիւն Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆԻ։ Գինը 30 կոպէկ։ Ծախվում է գրավաճառանոցում և հեղինակի այրիի մօտ։ Խնդրվում է այն անձինքներից, որոնց մօտ կան այդ գրքի բաժանորդագրական թերթեր, շտապեն ուղարկել հեղինակի այրիին։ 4—5

ՎՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, յայտնելով հայոց պարբերական թերթերի խմբագրութիւններին և հայ գրքերի հրատարակիչներին, որ ներկայ տարվայ հոկտեմբերի 1-ից ընկերութիւնը ընդունելու է Ալէքսանդրեան այգում գտնվող իր սեփական գրախանութում վաճառելու համար հայերէն հրատարակութիւններ, խնդրում է ցանկացողներին ուղարկել յիշեալ գրախանութը իրանց գրքերը և պարբերական հրատարակութիւնները։ Պայմանների մասին տեղեկանալ գրախանութի կառավարչից։ 2—3

Լոյս տեսան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ հետևեալ հրատարակութիւնները։

1) Ե. Սպիրի՝ „Ուռենց Յովսէփ.“ Թարգմ. Ի. Ց. գինն է 15 կ. 2) Պարոնեան „Մծապատիւ մուրացկանները.“ գինն է 40 կ.։

Ընկերութեան անդամներն այդ գրքերը կարող են ստանալ կենտրօնական գրավաճառանոցից, ներկայացնելով իրանց անդորրագրերը։ 2—2

Պատիւ ունեմ յայտնել ի գիտութիւն հասարակութեան և այն անձանց, որոնք յանձն են առել բաժանորդ հաւաքել իմ Գեղարուեստական ալբոմին—հայ գործիչների, թէ ի նկատի ունենալով, որ շուտով լոյս է տեսնելու ալբոմը, ես անհրաժեշտ համարեցի ստորագրութիւնների ժողովելը մի տեղ կենտրօնացնել, այն է Թիֆլիս, Կենտրօնական գրավաճառանոցում։ Այս պատճառով խնդրում եմ բաժանորդագրութեան տարածման գործակիցներին, որ բարեհաճեն ստորագրութեան ցուցակը և ժողոված գրամը հասցնել կենտրօնական գրավաճառանոցին մինչև առաջիկայ հոկտեմբերի 1-ը։ Այնտեղ թող դիմեն և նրանք, որոնք ցանկանում են ստորագրվել ալբոմին, նրանք, որոնք մինչև որոշեալ ժամանակը ժողոված գրամը չեն հասցնի, կը զրկեն բաժանորդագրութեան 3 ռուբլի վճարով ստանալու իրաւունքից։ Ալբոմը լոյս տեսնելուց յետոյ կը ծախվի 5 ռուբլով։

3—3 ՊՕՂՈՍ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Մի պատուաւոր ընտանիք կամենում է իր մօտ պահել գիշերօթիկ մանուկներ՝ աշակերտներ կամ աշակերտուհիներ։ Ընտանիքի զաւակները—դուստրը՝ աւարտած է Թիֆլիսի օրիորդաց գիմնազիօնի 8-րդ դասարանը, ընտանեկան դաստիարակչուհու և ընտանեկան ուսուցչուհու զիպլոմով. իսկ որդին՝ առաջին գիմնազիայի 7-րդ դասարանում, կարող են պատրաստել աշակերտներին և աշակերտուհիներին գիմնազիայի մինչև 4-րդ դասարան, նմանապէս կարող են պարապել նրանց հետ և հայոց լեզուից։ Հասցէն հարցնել „Մշակի“ և „Աղբիւրի“ խմբագրատանը։ 2—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 4/16 հոկտեմբերի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ EBRE (ԷԲՐ) շոգենաւը, նաւապետ RANGONE (ՐԱՆԳՕՆ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լօնդոն, մանելով և միջանկեալ նաւահանգիստները։

Ագենտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱԼԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԼԴԼՈՒՍ։ 2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսօն, և Կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 11/23 սեպտեմբերի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ
— 25 սեպտ. (7 հոկտեմբերի)	—	ԱՐՄԵՆԻԱ	— ՏԻԲԱԼ
— 9/21 հոկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԷԼ
— 23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)		ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։ Տօմսակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Միջին-փողոցում, Նախկին գներալ Տէր-Աստուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, կոլիեգիական Հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՍԿՈՒՄ պ. Լուի Բրնօին։ 7—12 (Ե. Շ.)

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Քաղաքի կենտրօնում, Գոլովինսկի պրոսպէկտի վրա։ Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կոպէկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում։

Կերակուրները թարմ և համով։

НОВЫЕ НОМЕРА

„ДАНІЯ“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

17—36

ՎԱՐԴԱՆ ԼԻՍԻՑԵԱՆԻ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԵՐ“

Կանվայի համար, տեսք № 2.

Վաճառվում է բոլոր գրախանութներում։ Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի՝ Тифлисъ, Вардану Лисицянъ։ Դումարով գնողներին զիջում—25 օրինակի համար 10%, 50 օրինակի համար —20%։ Ճանապարհածախսը յօրինողի վրա է։ 6—8

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Сентября 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.